# Ազգային հերոս Ջիվան Աբրահամյան - 50







ՀՀ ազգային հերոս Ջիվան Աբրահամյանի ծննդյան 50-ամյակին եւ մահվան 20-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր միջոցառումը սկսվեց «Եռաբլուր» զինվորական պանթեոնից: ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Յու. Խաչատուրովը, բարձրաստիճան զինվորականները, մարտական ընկերները, հարազատները ծաղկեպսակներ դրեցին հերոսի, ինչպես նաեւ հարգանքի տուրք մատուցեցին Զորավար Անդրանիկի եւ ՀՀ ազգային հերոս Վազգեն Սարգսյանի շիրիմներին: Հիշատակի հոգեւոր ծիսակարգ կատարվեց ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես սրբազանի մատուցմամբ:

ՀՀ ազգային հերոս Ջիվան Աբրահամյանին նվիրված միջոցառումը շարունակվեց Երեւանի կամերային երաժշտության տանը, որտեղ ելույթ ունեցավ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը: Ներկայացնելով հերոսին՝ նախարարը մասնավորապես նշեց, որ Ջիվանի նմանները հայտնվում են իրենց ժողովրդի համար ամենից կարեւոր եւ վճռորոշ պահերին, որպես փրկության առագաստներ լույսի ճանապարհ են բացում եւ ապահովում իրենց ժողովրդի հարատեւության ընթացքը: Որպես գաղափարի մարտիկ Ջիվանը եւ իր ընկերները կորիզը հանդիսացան նաեւ նորաստեղծ հայոց բանակի: Ելույթ ունեցավ նաեւ Հատուկ գնդի առաջին հրամանատար Սերգեյ Առաքելյանը, «Հատուկ գունդ վետերանների միություն» ՀԿ նախագահ գեներալ-լեյտենանտ Գուրգեն Մելքոնյանը: Նրանք Ջիվան Աբրահամյանին բնութագրեցին որպես հայրենիքը, իր ժողովրդին անձնվեր սիրող զինվորականի, որն իր կյանքի գնով հարթեց իր ժողովրդի հաղթական ճանապարհը:

Հուզիչ եւ ոգեղինող էր Հայաստանի ազգային հերոսի մոր՝ Բավական մայրիկի խոսքը. «Փա՛ռք մեր տղաներին, ես հպարտ եմ, որ Ջիվանի նման որդի եմ ունեցել ու դաստիարակել: Իմ զավակները բոլորն է մասնակցել են պատերազմին: Ես տառապած, բայց երջանիկ մայր եմ: Բոլոր նրանք, ովքեր թշնամուն դուրս վռնդեցին մեր հողերից, Ջիվանիս նման հերոսներ են: Օրհնում եմ բոլորին, ովքեր ամեն ինչ անում են, որ հայրենիքի հերոսների անունները չմոռացվեն, եւ նրանց գործն ու հիշատակը հայրենասիրական դաս լինի սերունդների համար»:

Հանդիսավոր միջոցառման ավարտին հայրենասիրական երգեր հնչեցին ՊՆ Մպայի տան «Զորական» համույթի, «Հովեր» երգչախմբի, հայ անվանի երգիչ-երգչուհիների կատարմամբ:

ԳՆԵԼ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ